

Գլուխ 29

«Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգը

Հոդված 219. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի էությունը եւ կիրառումը

1. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգն օտարերկրյա ապրանքների նկատմամբ կիրառվող մաքսային ընթացակարգ է, որին համապատասխան այդ ապրանքները ժամանակավոր գտնվում եւ օգտագործվում են Միության մաքսային տարածքում՝ պահպանելով ապրանքներն այդ մաքսային ընթացակարգով ձեւակերպելու եւ այդ մաքսային ընթացակարգին համապատասխան դրանք օգտագործելու պայմանները՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարմամբ եւ առանց հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման կամ առանց ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման եւ առանց հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման:

2. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքները (այսուհետ սույն գլխում՝ ժամանակավոր ներմուծված ապրանքներ) պահպանում են օտարերկրյա ապրանքների կարգավիճակը:

3. Ապրանքների այն կատեգորիաները, որոնց ժամանակավոր գտնվելը եւ օգտագործումը Միության մաքսային տարածքում «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգին համապատասխան թույլատրվում է առանց ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման, այդ ժամանակավոր գտնվելու եւ օգտագործվելու պայմանները, ինչպես նաեւ այդ ժամանակավոր գտնվելու եւ օգտագործվելու վերջնաժամկետները սահմանվում են Հանձնաժողովի կողմից եւ (կամ) երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով:

4. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգը չի կիրառվում ապրանքների հետեւյալ կատեգորիաների նկատմամբ՝

1) սննդամթերք, խմիչքներ՝ ներառյալ ալկոհոլային խմիչքները, ծխախոտ եւ ծխախոտային արտադրատեսակներ, հումք եւ կիսաֆաբրիկատներ, ծախսվելիք նյութեր եւ նմուշներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ներմուծվում են Միության մաքսային տարածք մեկ օրինակից՝ գովազդային եւ (կամ) ցուցադրության նպատակներով կամ որպէս ցուցանմուշներ կամ արդյունաբերական նմուշներ.

2) թափոններ՝ ներառյալ արտադրական թափոնները.

3) Միության մաքսային տարածք ներմուծման համար արգելված ապրանքներ:

5. Թույլատրվում է «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի կիրառումը «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության կասեցման համար՝ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ավելի վաղ ձեւակերպված ապրանքների վերամշակման արդյունքներն այդ մաքսային ընթացակարգով ձեւակերպելու միջոցով:

Հոդված 220. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ապրանքների ձեւակերպման եւ այդ մաքսային ընթացակարգին համապատասխան դրանց օգտագործման պայմանները

1. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ապրանքների ձեւակերպման պայմաններն են՝

1) «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող ապրանքների նույնականացման հնարավորությունը՝ այդ մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու նպատակով մաքսային ընթացակարգով դրանց հետագա ձեւակերպման դեպքում:

Ապրանքների նույնականացում չի պահանջվում այն դեպքերում, երբ երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան, թույլատրվում է ժամանակավոր ներմուծված ապրանքների փոխարինում.

2) սույն Օրենսգրքի 223-րդ հոդվածին համապատասխան ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարումը՝ բացառությամբ այն դեպքի, երբ սույն Օրենսգրքի 219-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Միության մաքսային տարածքում ապրանքների ժամանակավոր գտնվելը եւ օգտագործումը՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգին համապատասխան, թույլատրվում է առանց ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման.

3) ապրանքների ժամանակավոր գտնվելու եւ օգտագործման պայմանների պահպանումը՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ առանց ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման, եթե այդպիսի պայմաններ սահմանված են Հանձնաժողովի կողմից՝ սույն Օրենսգրքի 219-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան եւ (կամ) նախատեսված են երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով.

4) արգելքների եւ սահմանափակումների պահպանումը՝ սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան.

2. Ապրանքների՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգին համապատասխան օգտագործման պայմաններն են՝

1) «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի՝ մաքսային մարմնի կողմից սահմանված գործողության ժամկետի պահպանումը.

2) ժամանակավոր ներմուծված ապրանքների տնօրինման եւ օգտագործման հետ կապված՝ սույն Օրենսգրքի 222-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների պահպանումը.

3) սույն Օրենսգրքի 223-րդ հոդվածին համապատասխան ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարումը՝ բացառությամբ այն դեպքի, երբ սույն Օրենսգրքի 219-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Միության մաքսային տարածքում ապրանքների ժամանակավոր գտնվելը եւ օգտագործումը՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգին համապատասխան, թույլատրվում է առանց ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման.

4) ապրանքների ժամանակավոր գտնվելու եւ օգտագործման պայմանների պահպանումը՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ առանց ներմուծման այն մաքսատուրքերի, հարկերի վճարման, որոնք սահմանված են Հանձնաժողովի կողմից՝ սույն Օրենսգրքի 219-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան, եւ (կամ) նախատեսված են երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրով:

Հոդված 221. «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը

1. «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը չի կարող գերազանցել 2 տարին՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ապրանքները ձեւակերպելու օրվանից սկսած, կամ Հանձնաժողովի կողմից՝ սույն կետի երկրորդ պարբերությանը համապատասխան սահմանված ժամկետը:

Ապրանքների առանձին կատեգորիաների համար, կախված Միության մաքսային տարածք դրանց ներմուծման նպատակներից, Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության՝ ավելի կարճ կամ ավելի երկարատեւ ժամկետ, քան 2 տարին է:

2. Ապրանքները «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպելիս, ելնելով Միության մաքսային տարածք ապրանքների ներմուծման նպատակներից եւ հանգամանքներից, մաքսային մարմինը հայտարարատուի դիմումի հիման վրա սահմանում է այդ մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը, որը, հաշվի առնելով սույն հոդվածի 4-րդ կետը, չի կարող գերազանցել սույն հոդվածի 1-ին կետի առաջին պարբերությամբ նախատեսված կամ Հանձնաժողովի կողմից՝ սույն հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերությանը համապատասխան սահմանված ժամկետը:

3. «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի՝ մաքսային մարմնի կողմից սահմանված գործողության ժամկետն անձի դիմումի

համաձայն կարող է երկարաձգվել՝ մինչև այդ ժամկետը լրանալը կամ լրանալուց հետո՝ 1 ամսվա ընթացքում՝ տվյալ մաքսային ընթացակարգի՝ սույն հոդվածի 1-ին կետի առաջին պարբերությամբ նախատեսված կամ Հանձնաժողովի կողմից՝ սույն հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերությանը համապատասխան սահմանված գործողության ժամկետի սահմաններում: Մաքսային մարմնի կողմից սահմանված՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը երկարաձգելիս այն լրանալուց հետո այդ մաքսային ընթացակարգի գործողությունը վերսկսվում է այդ մաքսային ընթացակարգը դադարելու օրվանից:

4. Միության մաքսային տարածքում գտնվող օտարերկրյա ապրանքների նկատմամբ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգը բազմիցս կիրառելիս, այդ թվում՝ այն դեպքում, երբ որպես այդ ապրանքների հայտարարատու հանդես են գալիս տարբեր անձինք, «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության ընդհանուր ժամկետը չի կարող գերազանցել սույն հոդվածի 1-ին կետի առաջին պարբերությունում նշված կամ սույն հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերությանը համապատասխան Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետը:

Հոդված 222. Ժամանակավոր ներմուծված ապրանքների տիրապետման եւ օգտագործման հետ կապված սահմանափակումները

1. Ժամանակավոր ներմուծված ապրանքները պետք է մնան անփոփոխ վիճակում՝ բացառությամբ բնական մաշվածության, ինչպես նաև փոխադրման (տրանսպորտային փոխադրման) եւ (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետեւանքով առաջացած փոփոխությունների:

Թույլատրվում է ժամանակավոր ներմուծված ապրանքների հետ կատարել դրանց պահպանվածության ապահովման համար անհրաժեշտ գործողություններ՝ ներառյալ վերանորոգումը (բացառությամբ կապիտալ վերանորոգման, արդիականացման), տեխնիկական սպասարկումը եւ ապրանքները բնականոն վիճակում պահպանելու համար անհրաժեշտ այլ գործողություններ՝ «ժամանակավոր

ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունը սույն Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերին համապատասխան ավարտելիս մաքսային մարմնի կողմից ապրանքների նույնականացումն ապահովվելու պայմանով:

Թույլատրվում է ժամանակավոր ներմուծված ապրանքները ենթարկել փորձարկումների, հետազոտությունների, թեստավորման, ստուգումների կամ դրանց հետ փորձեր կամ գիտափորձեր կատարել կամ դրանք օգտագործել փորձարկումների, հետազոտությունների, թեստավորման, ստուգումների անցկացման, փորձերի եւ գիտափորձերի կատարման ընթացքում:

2. Ժամանակավոր ներմուծված ապրանքները պետք է գտնվեն հայտարարատուի փաստացի տիրապետման եւ օգտագործման տակ՝ բացառությամբ սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքերի:

3. Թույլատրվում է հայտարարատուի կողմից առանց մաքսային մարմնի թույլտվության այլ անձի տիրապետմանը եւ օգտագործմանը փոխանցել՝

ժամանակավոր ներմուծված բազմաշրջանառու (վերադարձվող) տարան, որը նախատեսված է Միության մաքսային տարածք ներմուծված ապրանքների փաթեթավորման եւ պաշտպանության համար.

ժամանակավոր ներմուծված ապրանքները՝ դրանց տեխնիկական սպասարկման, վերանորոգման (բացառությամբ կապիտալ վերանորոգման, արդիականացման), պահպանման, փոխադրման (տրանսպորտային փոխադրման) նպատակով.

ժամանակավոր ներմուծված ապրանքները՝ փորձարկումներ, հետազոտություններ, թեստավորում, ստուգում անցկացնելու, փորձեր կամ գիտափորձեր կատարելու նպատակով.

ժամանակավոր ներմուծված ապրանքները՝ այլ նպատակներով՝ Հանձնաժողովի կողմից սահմանված եւ (կամ) երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում:

Այլ դեպքերում հայտարարատուի կողմից ժամանակավոր ներմուծված ապրանքներն այլ անձանց տիրապետմանը եւ օգտագործմանը փոխանցել թույլատրվում է մաքսային մարմնի թույլտվությամբ կամ այն դեպքերում, կարգով եւ ժամկետներում, որոնք սահմանվում են Հանձնաժողովի կողմից՝ մաքսային մարմնի ծանուցումից հետո:

4. Ժամանակավոր ներմուծված ապրանքներն այլ անձանց տիրապետմանը եւ օգտագործմանը փոխանցելու համար մաքսային մարմնի թույլտվությունն ստանալու նպատակով այդ ապրանքների հայտարարատուն գրավոր դիմում է ներկայացնում այն մաքսային մարմին, որի կողմից դրանք ձեւակերպվել են մաքսային ընթացակարգով՝ դիմումի մեջ նշելով ժամանակավոր ներմուծված ապրանքներն այլ անձի փոխանցելու պատճառները եւ տեղեկություններ այդ անձի մասին:

Ժամանակավոր ներմուծված ապրանքներն այլ անձանց տիրապետմանը եւ օգտագործմանը փոխանցելն այդ ապրանքների հայտարարատուին չի ազատում «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ ապրանքների օգտագործման՝ սույն գլխով սահմանված այլ պայմանների կատարումից, ինչպես նաեւ չի կասեցնում եւ չի երկարաձգում ժամանակավոր ներմուծման ժամկետը:

5. Այն ապրանքները, որոնք սահմանվել են Հանձնաժողովի կողմից սույն Օրենսգրքի 219-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան, եւ երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով եւ որոնց նկատմամբ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգը կիրառվում է առանց ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման, օգտագործվում են Միության մաքսային տարածքի սահմաններում, եթե Հանձնաժողովի կողմից այլ բան սահմանված չէ:

6. Թույլատրվում է տրանսպորտային միջոցներ հանդիսացող՝ ժամանակավոր ներմուծված ապրանքների օգտագործումը Միության մաքսային տարածքից դուրս, եթե դրանք օգտագործվում են որպես միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներ, եւ դրանց նկատմամբ կիրառվում են սույն Օրենսգրքի 38-րդ գլխի դրույթները:

Միության մաքսային տարածքից դուրս տրանսպորտային միջոցներ հանդիսացող՝ ժամանակավոր ներմուծված ապրանքներն օգտագործելիս այդ ապրանքների նկատմամբ թույլատրվում է սույն Օրենսգրքի 277-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործողությունների կատարումը:

Սույն Օրենսգրքի 277-րդ հոդվածի 1-ին կետով չնախատեսված գործողությունների կատարումը թույլատրվում է սույն Օրենսգրքի 277-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան:

Միության մաքսային տարածքից դուրս տրանսպորտային միջոցներ հանդիսացող՝ ժամանակավոր ներմուծված ապրանքները որպես միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներ օգտագործելը չի դադարեցնում եւ չի կասեցնում «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունը:

Հոդված 223. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգը կիրառելիս ներմուծման մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման եւ վճարման առանձնահատկությունները

1. Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարմամբ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող (ձեւակերպված) ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման դրանք «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու օրվանից մինչեւ վերջինիս գործողությունն ավարտվելու օրն ընկած ժամանակահատվածի համար:

2. Առանց ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների մասով՝ հայտարարատուի դիմումի համաձայն, որը մինչեւ սույն Օրենսգրքի 219-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան սահմանված վերջնաժամկետը լրանալը ներկայացվել է այն մաքսային մարմին, որի կողմից իրականացվել է ապրանքների բացթողումը «ժամանակավոր ներմուծում

(թույլտվություն)» մաքսային ընթացակարգով դրանք ձեւակերպելիս, կատարվում է ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարում՝ հայտարարատուի դիմումի մեջ նշված օրվանից մինչեւ «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելու օրն ընկած ժամանակահատվածի համար:

Որպես հայտարարատուի դիմում օգտագործվում է «ապրանքների հայտարարագրի ճշգրտում» մաքսային փաստաթուղթը:

3. Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարման դեպքում սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերին համապատասխան սահմանված՝ յուրաքանչյուր օրացուցային ամսվա (լրիվ եւ ոչ լրիվ) ժամանակահատվածի համար (այսուհետ սույն գլխում՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարման կիրառման ժամանակահատված) վճարման է ենթակա այդ ապրանքները «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու համար ներկայացված մաքսային հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ, իսկ այն ապրանքների նկատմամբ, որոնց բացթողումն իրականացվել է մինչեւ ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը՝ մինչեւ ապրանքների հայտարարագրի ներկայացումն ապրանքների բացթողման մասին դիմումը գրանցելու օրվա դրությամբ հաշվարկված՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի այն գումարի 3 տոկոսը, որը ենթակա կլինէր վճարման, եթէ «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքները ձեւակերպվեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով:

4. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունը սույն Օրենսգրքի 224-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան կասեցնելու դեպքում այդ կասեցման ժամանակահատվածի համար ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարում չի կատարվում: Սույն կետի կիրառման նպատակով՝ մաքսային գործընթացի գործողության կասեցման ժամանակահատվածը որոշվում է այն լրիվ օրացուցային ամիսների քանակով, որոնց ընթացքում «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունը կասեցվել է:

5. Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարման դեպքում ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարը հայտարարատուի ընտրությամբ վճարվում է ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարման ողջ ժամանակահատվածի համար (այսուհետ սույն գլխում՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի միանվագ վճարում) կամ պարբերաբար (ներմուծման մաքսատուրքերի, հարկերի պարբերական վճարում): Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի պարբերական վճարման դեպքում այդպիսի վճարումը կատարվում է սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան վճարման ենթակա չափով՝ ոչ պակաս, քան 1 օրացուցային ամսվա համար (լրիվ կամ ոչ լրիվ): Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման պարբերականությունը սահմանվում է հայտարարատուի կողմից՝ ապրանքների հայտարարագրում:

Սույն Օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ կետին եւ 5-րդ կետի 2-րդ եւ 3-րդ ենթակետերին համապատասխան սահմանված ժամկետներում պարբերաբար վճարվող ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարները չվճարվելու կամ ամբողջությամբ չվճարվելու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են միանվագ վճարման՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարման կիրառման ամբողջ մնացած ժամանակահատվածի համար:

6. Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարման կիրառման ժամանակահատվածի ընթացքում վճարված եւ (կամ) բռնագանձված ներմուծման մաքսատուրքերի, հարկերի ընդհանուր գումարը չպետք է գերազանցի այդ ապրանքները «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու համար ներկայացված մաքսային հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ, իսկ այն ապրանքների նկատմամբ, որոնց բացթողումն իրականացվել է մինչեւ ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը՝ մինչեւ ապրանքների հայտարարագրի ներկայացումը ապրանքների բացթողման մասին դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվա դրությամբ հաշվարկված՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի այն գումարը, որը ենթակա կլիներ վճարման, եթե ապրանքները ձեւակերպվեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով:

7. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունը սույն Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 5-րդ կետերին համապատասխան ավարտվելու կամ դադարեցվելու դեպքում ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարում կիրառելու ժամանակահատվածի ընթացքում վճարված եւ (կամ) բռնագանձված ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարները ենթակա չեն վերադարձման (հաշվանցման), եթե սույն Օրենսգրքով այլ բան սահմանված չէ:

Հոդված 224. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելը, կասեցնելն ու դադարեցնելը

1. Մինչեւ «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի՝ մաքսային մարմնի կողմից սահմանված գործողության ժամկետը լրանալն այդ մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է՝

1) ժամանակավոր ներմուծված ապրանքները «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելով, այդ թվում՝ սույն Օրենսգրքի 276-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան.

2) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան՝ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետեւանքով ժամանակավոր ներմուծված ապրանքների ոչնչացման եւ (կամ) անվերադարձ կորստի փաստը կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) եւ (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետեւանքով այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստը մաքսային մարմնի կողմից ճանաչվելով.

3) Հանձնաժողովի եւ (կամ) մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող հանգամանքների ի հայտ գալով, նախքան որոնց ի հայտ գալը ապրանքները գտնվում են մաքսային հսկողության տակ.

2. Մինչև «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի՝ մաքսային մարմնի կողմից սահմանված գործողության ժամկետը լրանալն այդ մաքսային ընթացակարգի գործողությունը կարող է ավարտվել՝

1) Ժամանակավոր ներմուծված ապրանքներն այն մաքսային ընթացակարգերով ձեւակերպելով, որոնք կիրառելի են օտարերկրյա ապրանքների նկատմամբ, սույն Օրենսգրքով նախատեսված պայմաններով՝ բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի, եթե այլ բան սահմանված չէ սույն կետով.

2) վերսկսելով «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունը, որի գործողությունը կասեցվել էր՝ սույն Օրենսգրքի 173-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան.

3) Ժամանակավոր ներմուծված ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելով, եթե այդ ապրանքները ձեւակերպված են այդ ընթացակարգով Միության մաքսային տարածքով այն անդամ պետության տարածքից, որի մաքսային մարմնի կողմից կատարվել է ապրանքները «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպելիս դրանց բացթողումը, այլ անդամ պետության տարածք փոխադրման (տրանսպորտային փոխադրման) համար:

3. Մինչև «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի՝ մաքսային մարմնի կողմից սահմանված գործողության ժամկետը լրանալն այդ մաքսային ընթացակարգի գործողությունը կարող է կասեցվել Ժամանակավոր ներմուծված ապրանքները «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով, «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու դեպքում կամ Հանձնաժողովի կողմից սահմանվող՝ հատուկ մաքսային ընթացակարգով ձեւակերպելու դեպքերում:

Ժամանակավոր ներմուծված ապրանքները հատուկ մաքսային ընթացակարգով ձեւակերպելու արդյունքում «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության կասեցման դեպքը սահմանելիս Հանձնաժողովն իրավունք ունի Ժամանակավոր ներմուծված ապրանքների նկատմամբ սահմանելու

ներմուծման մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման եւ վճարման առանձնահատկությունները, ինչպես նաեւ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետը:

4. Ժամանակավոր ներմուծված ապրանքները մեկ կամ մի քանի խմբաքանակներով կարող են ձեւակերպվել «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով կամ որեւէ այլ մաքսային ընթացակարգով:

5. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի՝ մաքսային մարմնի կողմից սահմանված գործողության ժամկետը լրանալուն պես մաքսային ընթացակարգի գործողությունը դադարում է:

6. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության ավարտի դեպքերը, պայմանները եւ կարգը մեկ այլ անդամ պետության տարածքում, որի չի հանդիսանում այն անդամ պետությունը, որի մաքսային մարմնի կողմից այդ ապրանքները ձեւակերպվել են «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով, որոշվում են Հանձնաժողովի կողմից:

Հոդված 225. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող (ձեւակերպված) ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առաջացումը եւ դադարումը, դրանց վճարման ժամկետը եւ հաշվարկումը

1. Հայտարարատուի՝ «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունն առաջանում է մաքսային մարմնի կողմից ապրանքների հայտարարագիրը գրանցվելու պահից, իսկ այն ապրանքների նկատմամբ, որոնք բացթողման համար հայտագրվել են մինչեւ ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը՝ նախքան ապրանքների հայտարարագիրը ներկայացնելու ապրանքների բացթողման դիմում ներկայացված անձի՝ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը

վճարելու պարտավորությունն առաջանում է ապրանքների բացթողման մասին դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցվելու պահից՝ նախքան ապրանքների հայտարարագիր ներկայացնելը:

Մեկ առաքողի կողմից մեկ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթով մեկ ստացողի հասցեով ներմուծվող՝ «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող ապրանքների նկատմամբ, որոնց ընդհանուր մաքսային արժեքը չի գերազանցում 200 եվրոյին համարժեք գումարը, իսկ Հանձնաժողովի կողմից այդպիսի գումարի այլ չափ որոշված լինելու դեպքում՝ Հանձնաժողովի կողմից սահմանված գումարը՝ մաքսային մարմնի կողմից ապրանքների հայտարարագիրը գրանցելու օրվա դրությամբ գործող փոխարժեքով՝ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորություն չի առաջանում: Ընդ որում, սույն կետի նպատակներով մաքսային արժեքում չեն ներառվում Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների ժամանման վայր փոխադրման (տրանսպորտային փոխադրման) ծախսերը, այդպիսի ապրանքների բեռնման, բեռնաթափման կամ փոխաբեռնման ծախսերը եւ ապահովագրական ծախսերը՝ կապված այդպիսի ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման), բեռնման, բեռնաթափման կամ փոխաբեռնման հետ:

Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու գումարի այլ՝ սույն կետի երկրորդ պարբերությամբ չնախատեսված չափ, որի սահմաններում մեկ առաքողի կողմից մեկ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթով մեկ ստացողի հասցեով ներմուծվող՝ «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորություն չի առաջանում:

2. Հայտարարատուի՝ «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող (ձեւակերպված) ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը դադարում է հետեւյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը՝ սույն Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերին համապատասխան՝ մինչեւ սույն Օրենսգրքի 219-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան սահմանված վերջնաժամկետը լրանալը՝ բացառությամբ այն դեպքի, երբ մինչեւ այդ մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը լրանալը վրա է հասել ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետը.

2) «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը՝ սույն Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերին համապատասխան, եթե «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների նկատմամբ կիրառվել են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնություններ՝ բացառությամբ այն դեպքի, երբ մինչեւ այդ մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը լրանալը վրա է հասել ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետը.

3) «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը՝ սույն Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերին համապատասխան, եւ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարում եւ (կամ) դրանց բռնագանձում՝ սույն հոդվածին համապատասխան վճարման ենթակա չափերով.

4) մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարումը եւ (կամ) դրանց բռնագանձումը՝ սույն հոդվածի 5-րդ կետի 6-8-րդ ենթակետերով եւ 9-րդ կետի 1-3-րդ ենթակետերով նախատեսված հանգամանքների ի հայտ գալու դեպքում վճարման ենթակա չափերով.

5) մաքսային մարմնի կողմից անդամ պետության՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան օտարերկրյա ապրանքների՝ մինչեւ «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետեւանքով ոչնչացման եւ (կամ) անվերադարձ կորստի կամ փոխադրման

(տրանսպորտային փոխադրման) եւ (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետեւանքով այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստի ճանաչումը եւ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը կատարումը եւ (կամ) դրանց բռնագանձումը՝ սույն հոդվածին համապատասխան վճարման ենթակա չափերով՝ հանգամանքների ի հայտ գալու նախորդող ժամանակահատվածի համար.

6) «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողումը մերժելը՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորության մասով, որն առաջացել է ապրանքների հայտարարագիրը կամ նախքան ապրանքների հայտարարագրի ներկայացումն ապրանքների բացթողման մասին դիմումը գրանցելիս.

7) սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան մաքսային հայտարարագիրը հետ կանչելը եւ (կամ) սույն Օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան ապրանքների բացթողումը չեղյալ ճանաչելը՝ մաքսային հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առնչությամբ.

8) անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան ապրանքները բռնագրավելը կամ կամ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը եւ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարում եւ (կամ) դրանց բռնագանձում՝ սույն հոդվածին համապատասխան վճարման ենթակա չափերով՝ այդպիսի հանգամանքների ի հայտ գալու ժամանակահատվածի համար.

9) սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան ապրանքների արգելանքի վերցնելը (արգելապահելը) եւ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարում եւ (կամ) դրանց բռնագանձում՝ սույն հոդվածին համապատասխան վճարման ենթակա չափերով՝ այդպիսի արգելանքի վերցնելուն (արգելապահելուն) նախորդող ժամանակահատվածի համար.

10) այն ապրանքների ժամանակավոր պահպանման հանձնելը կամ մաքսային ընթացակարգերով մեկով ձեւակերպելը, որոնք առգրավվել են, կամ որոնց վրա արգելանք է դրվել հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական վարույթ վարելու) ընթացքում եւ որոնց նկատմամբ ընդունվել է դրանք վերադարձնելու մասին որոշում, եթե նախկինում այդպիսի ապրանքների բացթողում չի իրականացվել, եւ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարում եւ (կամ) դրանց բռնագանձում՝ սույն հոդվածին համապատասխան վճարման ենթակա չափերով՝ հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական վարույթ վարելու) ընթացքում այդպիսի ապրանքների առգրավմանը կամ դրանց վրա արգելանք դնելուն նախորդող ժամանակահատվածի համար:

3. Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարմամբ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող (ձեւակերպված) ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման (ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման)՝

1) ներմուծման մաքսատուրքերի, հարկերի միանվագ վճարման ժամանակ կամ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի պարբերական վճարման դեպքում՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարի առաջին մասի վճարման ժամանակ՝ մինչեւ ապրանքների բացթողումը՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգին համապատասխան.

2) ներմուծման մաքսատուրքերի, հարկերի պարբերական վճարման դեպքում՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարի երկրորդ եւ հաջորդ մասերի վճարման ժամանակ՝ մինչեւ այն ժամանակահատվածի սկիզբը, որի համար կատարվում է ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարի հերթական մասի վճարումը:

4. Սույն հոդվածի 3-րդ կետում նշված ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման սույն Օրենսգրքի 223-րդ հոդվածին համապատասխան սահմանված չափերով:

5. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման սույն կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետ է համարվում՝

1) ապրանքների ժամանակավոր գտնվելու եւ օգտագործելու՝ սույն Օրենսգրքի 219-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան սահմանված պայմանները չպահպանելու դեպքում՝ նշված ապրանքները «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու օրը.

2) սույն Օրենսգրքի 219-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան սահմանված վերջնաժամկետը լրանալու դեպքում՝

ներմուծման մաքսատուրքերի, հարկերի միանվագ վճարման ժամանակ կամ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի պարբերական վճարման դեպքում՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարի առաջին մասի վճարման ժամանակ՝ այդ վերջնաժամկետը լրանալու օրը.

ներմուծման մաքսատուրքերի, հարկերի պարբերական վճարման դեպքում՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարի երկրորդ եւ հաջորդ մասերի վճարման ժամանակ՝ այն ժամանակահատվածի սկզբին նախորդող օրը, որի համար կատարվում է ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարի հերթական մասի վճարումը.

3) հայտարարատուի կողմից՝ սույն Օրենսգրքի 223-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան դիմում ներկայացվելու դեպքում՝

ներմուծման մաքսատուրքերի, հարկերի միանվագ վճարման ժամանակ կամ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի պարբերական վճարման դեպքում՝

ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարի առաջին մասի վճարման ժամանակ՝ հայտարարատուի դիմումում նշված օրվան նախորդող օրը.

ներմուծման մաքսատուրքերի, հարկերի պարբերական վճարման դեպքում՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարի երկրորդ եւ հաջորդ մասերի վճարման ժամանակ՝ այն ժամանակահատվածի սկզբին նախորդող օրը, որի համար կատարվում է ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարի հերթական մասի վճարումը.

4) հայտարարատուի կողմից ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման՝ այդ ապրանքներն օգտագործելու եւ (կամ) դրանք տնօրինելու մասով սահմանափակումների հետ կապված արտոնություններից հրաժարվելու դեպքում՝ ապրանքները «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու համար ներկայացված հայտարարագրում ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնություններից հրաժարվելու մասով փոփոխություններ կատարելու օրը.

5) ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման եւ (կամ) այդ ապրանքների օգտագործման եւ (կամ) տնօրինման սահմանափակումների հետ կապված արտոնությունների կիրառման ընթացքում այդ արտոնությունների տրամադրման նպատակներն ու պայմանները խախտող գործողությունների կատարման դեպքում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործողությունները կատարելն առաջացնում է սույն կետի 6-րդ եւ 7-րդ ենթակետերով նախատեսված հանգամանքների ի հայտ գալը՝ նշված գործողությունների կատարման առաջին օրը, իսկ եթե այդ օրը պարզված չէ՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով նշված ապրանքների ձեւակերպման օրը.

6) ժամանակավոր ներմուծված ապրանքները մինչեւ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության ավարտելը առանց մաքսային մարմինների թույլտվության այլ անձանց փոխանցելու դեպքում՝ ապրանքների փոխանցման օրը, իսկ եթե այդ օրը պարզված չէ՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով նշված ապրանքների ձեւակերպման օրը.

7) մինչև «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության ավարտելը ժամանակավոր ներմուծված ապրանքների կորստի դեպքում՝ ապրանքների կորստի օրը՝ բացառությամբ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետեւանքով ոչնչացման եւ (կամ) անվերադարձ կորստի կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) եւ (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետեւանքով կորստի, իսկ եթե այդ օրը պարզված չէ՝ «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով նշված ապրանքների ձեւակերպման օրը.

8) մինչև «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի՝ մաքսային մարմնի կողմից սահմանված գործողության ժամկետը լրանալը «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգը սույն Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերին համապատասխան չավարտելու դեպքում՝ «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի՝ մաքսային մարմնի կողմից սահմանված գործողության ժամկետը լրանալու օրը՝ բացառությամբ այն դեպքի, երբ այդ մաքսային ընթացակարգի գործողությունը երկարաձգվում է՝ սույն Օրենսգրքի 221-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան:

6. Սույն հոդվածի 5-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման՝

1) սույն հոդվածի 5-րդ կետի 1-ին ենթակետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝ այնպես, ինչպես դա կարվեր, եթե «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների նկատմամբ կիրառվեր ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարում՝ սույն Օրենսգրքի 223-րդ հոդվածին համապատասխան՝ ապրանքները «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու օրվանից մինչև դրա գործողությունն ավարտվելու օրն ընկած ժամանակահատվածի համար.

2) սույն հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝ այնպես, ինչպես դա կարվեր, եթե «Ժամանակավոր ներմուծում

(թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների նկատմամբ կիրառվեր ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարում՝ սույն Օրենսգրքի 223-րդ հոդվածին համապատասխան՝ սույն Օրենսգրքի 219-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան սահմանված վերջնաժամկետը լրանալու օրվան հաջորդող օրվանից մինչև «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելու օրն ընկած ժամանակահատվածի համար.

3) սույն հոդվածի 5-րդ կետի 3-րդ ենթակետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝ սույն Օրենսգրքի 223-րդ հոդվածին համապատասխան սահմանված չափերով.

4) սույն հոդվածի 5-րդ կետի 4-5-րդ ենթակետերում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝ սույն Օրենսգրքի 223-րդ հոդվածին համապատասխան սահմանված չափերով եւ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնություններ կիրառելու հետ կապված՝ չվճարված ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման՝ սույն հոդվածի 5-րդ կետի 4-5-րդ ենթակետերով սահմանված ժամկետն սկսվելու օրվանից մինչև «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելու օրն ընկած ժամանակահատվածի համար.

5) սույն հոդվածի 5-րդ կետի 6-8-րդ ենթակետերում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝ այնպես, ինչպես դա կարվեր, եթե «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքները ձեւակերպվեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ նվազեցնելով ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարները, որոնք վճարվել են եւ (կամ) բռնագանձվել են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարման դեպքում, եթե այլ չափ նախատեսված չէ սույն հոդվածի 8-րդ կետով: Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը հաշվարկվում են՝ ելնելով ներմուծման մաքսատուրքերի, հարկերի այն դրույքաչափերից, որոնք գործում են մաքսային մարմնի կողմից ապրանքների հայտարարագիրը գրանցվելու օրվա դրությամբ, որը ներկայացվել է ապրանքները «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու համար, իսկ այն ապրանքների նկատմամբ,

որոնց բացթողումը կատարվել է մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը՝ մաքսային մարմնի կողմից մինչև ապրանքների հայտարարագրի ներկայացումը ապրանքների բացթողման մասին դիմումը գրանցելու օրվա դրությամբ գործող դրույքաչափերից:

7. Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի այն գումարներից, որոնք վճարվում են (բռնագանձվում են) ապրանքների նկատմամբ՝ սույն հոդվածի 6-րդ կետի 5-րդ ենթակետին համապատասխան, ինչպես նաև ներմուծման մաքսատուրքերի, հարկերի այն գումարներից, որոնք վճարվել են այդ ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարման ժամանակ, ենթակա են վճարման տոկոսներ այնպես, ինչպես դա կարվեր, եթե նշված գումարների նկատմամբ տրամադրված լինեք դրանց վճարման հետաձգման (տարաժամկետ վճարման) հնարավորություն՝ ապրանքները «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեռակերպելու օրվանից մինչև ներմուծման մաքսատուրքերի, հարկերի՝ սույն հոդվածի 5-րդ կետի 6-8-րդ ենթակետերին համապատասխան սահմանված ժամկետները լրանալու օրն ընկած ժամանակահատվածի համար: Նշված տոկոսները հաշվարկվում է վճարվում են սույն Օրենսգրքի 60-րդ հոդվածին համապատասխան:

8. Եթե սույն հոդվածի 5-րդ կետի 6-րդ եւ 7-րդ ենթակետերում նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է սույն Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերին համապատասխան, ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման այնպես, ինչպես դա կարվեր, եթե «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեռակերպված ապրանքների նկատմամբ կիրառվեր ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարում սույն Օրենսգրքի 223-րդ հոդվածին համապատասխան՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման՝ սույն հոդվածի 5-րդ կետի 6-րդ եւ 7-րդ կետերին համապատասխան սահմանված ժամկետը սկսվելու օրվանից մինչև «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելու օրն ընկած ժամանակահատվածի համար: Ընդ որում, ներմուծման մաքսատուրքերի, հարկերի այն գումարները, որոնք վճարվել է (կամ)

բռնագանձվել են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարման ժամանակ՝ մինչև սույն հոդվածի 5-րդ կետի 6-րդ եւ 7-րդ ենթակետերում նշված հանգամանքների ի հայտ գալուն նախորդող ժամանակահատվածի համար, վերադարձման (հաշվանցման) ենթակա չեն:

Եթե սույն հոդվածի 5-րդ կետի 6-8-րդ ենթակետերում նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո ապրանքները հանձնվում են ժամանակավոր պահպանման կամ ձեւակերպվում են մաքսային ընթացակարգով՝ սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերին համապատասխան, ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման այնպես, ինչպես դա կարվեր, եթե «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների նկատմամբ կիրառվեր ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարում՝ սույն Օրենսգրքի 223-րդ հոդվածին համապատասխան՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման՝ սույն հոդվածի 5-րդ կետի 6-8-րդ ենթակետերով սահմանված ժամկետը սկսվելու օրվանից մինչև այդ ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնման կամ մաքսային ընթացակարգով ձեւակերպման օրն ընկած ժամանակահատվածի համար՝ այնպիսի չափերով, որոնք չեն գերազանցում ներմուծման մաքսատուրքերի, հարկերի այն գումարները, որոնք ենթակա էին վճարման, եթե «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքները ձեւակերպվեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով, եւ որոնք հաշվարկվել էին ապրանքները «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու համար ներկայացված մաքսային հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ, իսկ այն ապրանքների նկատմամբ, որոնց բացթողումն իրականացվել է մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը՝ մաքսային մարմնի կողմից մինչև ապրանքների հայտարարագրի ներկայացումը ապրանքների բացթողման մասին դիմումը գրանցվելու օրվա դրությամբ: Ընդ որում, ներմուծման մաքսատուրքերի, հարկերի այն գումարները, որոնք վճարվել եւ (կամ) բռնագանձվել են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարման ժամանակ՝ մինչև սույն հոդվածի 5-րդ կետի 6-8-րդ

ենթակետերում նշված հանգամանքների ի հայտ գալու ժամանակահատվածի համար, ենթակա չեն վերադարձման (հաշվանցման):

9. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների նկատմամբ հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման սույն կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

Հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ է համարվում՝

1) ժամանակավոր ներմուծված ապրանքները մինչև «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության ավարտն առանց մաքսային մարմնի թույլտվության այլ անձանց փոխանցելու դեպքում՝ ապրանքների փոխանցման օրը, իսկ եթե այդ օրը պարզված չէ՝ «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով նշված ապրանքների ձեւակերպման օրը.

2) մինչև «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը ժամանակավոր ներմուծված ապրանքների կորստի (բացառությամբ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետեւանքով ոչնչացման եւ (կամ) փոխադրման (տրանսպորտային փոխադրման) եւ (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետեւանքով կորստի) դեպքում՝ ապրանքների կորստի օրը, իսկ եթե այդ օրը պարզված չէ՝ «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով նշված ապրանքների ձեւակերպման օրը.

3) մինչև «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի՝ մաքսային մարմնի կողմից սահմանված գործողության ժամկետը լրանալը «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգը սույն Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերին համապատասխան չավարտվելու դեպքում՝ «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի՝ մաքսային մարմնի կողմից սահմանված գործողության ժամկետը լրանալու օրը՝ բացառությամբ այն դեպքի, երբ այդ մաքսային ընթացակարգի

գործողությունը երկարաձգվում է՝ սույն Օրենսգրքի 221-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան:

10. Սույն հոդվածի 9-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման այն չափերով, ինչպես դա կարվեր, եթե «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքները ձեւակերպվեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով: Հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ ելնելով հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի այն դրույքաչափերից, որոնք գործում են մաքսային մարմնի կողմից ապրանքների այն հայտարարագիրը գրանցվելու օրվա դրությամբ, որը ներկայացվել է ապրանքները «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու համար, իսկ այն ապրանքների նկատմամբ, որոնց բացթողումը կատարվել է մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը՝ մաքսային մարմնի կողմից մինչև ապրանքների մասով հայտարարագրի ներկայացումը ապրանքների բացթողման մասին դիմումը գրանցվելու օրվա դրությամբ գործող դրույքաչափերից:

Սույն կետի առաջին պարբերությանը համապատասխան վճարվող (բռնագանձվող) հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի գումարներից ենթակա են վճարման տոկոսներ այնպես, ինչպես դա կարվեր, եթե հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի նշված գումարների նկատմամբ տրամադրված լիներ դրանց վճարման հետաձգումը՝ ապրանքները «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու օրվանից մինչև հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի՝ սույն հոդվածի 9 կետով սահմանված վճարման ժամկետները լրանալու օրը: Նշված տոկոսները հաշվարկվում եւ վճարվում են սույն Օրենսգրքի 60-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 226. **Ժամանակավոր ներմուծված ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելիս դրանց նկատմամբ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի,**

**հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերի
հաշվարկման եւ վճարման առանձնահատկությունները**

1. Ժամանակավոր ներմուծված ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելիս ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ ելնելով ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերի եւ փոխարժեքների այն դրույքաչափերից, որոնք գործում են մաքսային մարմնի կողմից ապրանքների այն հայտարարագիրը գրանցվելու օրվա դրությամբ, որը ներկայացվել է ապրանքները «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու համար:

2. Ժամանակավոր ներմուծված ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելիս ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման սույն Օրենսգրքի 136-րդ հոդվածին համապատասխան այդ ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելիս ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարների եւ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող ապրանքների հայտարարատուի կողմից ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարման ժամանակ վճարված եւ (կամ) մաքսային մարմնի կողմից այդ հայտարարատուից բռնագանձված ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարների տարբերության չափով:

3. Սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան վճարվող (բռնագանձվող) ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարներից, ինչպես նաեւ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարման ժամանակ վճարված (բռնագանձված) ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարներից ենթակա են վճարման տոկոսներ այնպես, ինչպես դա կարվեր, եթե նշված գումարների նկատմամբ տրամադրված լիներ դրանց վճարման հետաձգման (տարաժամկետ վճարման) հնարավորություն՝ նշված ապրանքները «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու օրվանից մինչեւ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը դադարելու

օրը: Նշված տոկոսները հաշվարկվում եւ վճարվում են սույն Օրենսգրքի 60-րդ հոդվածին համապատասխան:

«Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող (ձեւակերպված) ապրանքների նկատմամբ վճարվող (բռնագանձվող) հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարներից ենթակա են վճարման տոկոսներ, այնպես, ինչպես դա կարվեր, եթե նշված գումարների նկատմամբ տրամադրվեր դրանց վճարման հետաձգում՝ ապրանքները «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու օրվանից մինչեւ հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը դադարելու օրը: Նշված տոկոսները հաշվարկվում եւ վճարվում են սույն Օրենսգրքի 60-րդ հոդվածին համապատասխան:

Մինչեւ ապրանքների՝ «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգին համապատասխան բացթողումը վճարված ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարներից սույն կետի առաջին պարբերությամբ նախատեսված տոկոսները չեն հաշվեգրվում եւ չեն վճարվում:

Ան դեպքում, երբ սույն Օրենսգրքի 224-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունը կասեցվել է, սույն կետով նախատեսված տոկոսները մաքսային ընթացակարգի գործողության կասեցման ժամանակահատվածում չեն հաշվեգրվում եւ չեն վճարվում:

Հանձնաժողովն իրավունք ունի ժամանակավոր ներմուծվող ապրանքների առանձին կատեգորիաների նկատմամբ սահմանելու դեպքեր, երբ սույն կետի առաջին եւ երկրորդ պարբերություններով նախատեսված տոկոսները չեն հաշվեգրվում եւ չեն վճարվում:

4. Սույն հոդվածի դրույթները կիրառվում են այն դեպքում, երբ «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելու դեպքում կամ «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունը՝ սույն Օրենսգրքի 224-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան դադարելու դեպքում ժամանակավոր ներմուծված ապրանքները

Ժամանակավոր ներմուծված ապրանքների հայտարարատուի կողմից ձեւակերպվում են «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով:

Սույն հոդվածի դրույթները կիրառվում են նաեւ այն դեպքում, երբ «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվել է՝ ժամանակավոր ներմուծված ապրանքները «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպելով: